**Արձանագրություն N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-04» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» դեկտեմբերի 2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արման Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄՀ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Խորեն Պետրոսյանը՝ ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:*

**1. «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-04» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման մասին.**

1.1. Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի դեկտեմբերի 16-ին, ժամը 10:00-ին:

**2 Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր /նախահաշվային/ գնի վերաբերյալ.**

2.1 Գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «Յուքոմ» ՍՊԸ | Իրավ. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն 4<br>Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1<br>հեռ. /060/ 44-44-44 |
| 2 | «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ | Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 4/1<br>Հեռ. (010) 568777 |
| 3 | «ԱրմենՏել» ՓԲԸ | Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2<br>Հեռ. (010)290505 |

3.1 Համակարգում 07.12.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 «Յուքոմ» ՍՊԸ-ի, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

5.1 «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ.

ա/ <<Ընթացակարգին մասնակցելու դիմումը>>՝ Հավելված 1 ներկայացված է PDF ձևաչափի ֆայլով. համակարգչի համապատասխան գործիքների միջոցով էլեկտրոնային ստորագրության հավաստագիրը /Certificate/ հնարավոր չէ դիտել /ստուգել/. բացվող համապատասխան պատուհանում նշվում է, որ ստորագրությունն անվավեր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

5.2 «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ.

ա/ Համակարգում <<Տեխնիկական չափորոշիչ>> բաժնում կցված չէ ընթացակարգի հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը. կցված է միայն Arlis.am կայքից արտատպված <<«ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված թիվ 60 լիցենզիայի փոփոխված տարբերակը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 24.08.2007թ. N 341-Ն որոշումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

5.3 «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի հաստատման էլեկտրոնային ստորագրության հավաստագրում /Certificate/ նշվում է, որ այն տրամադրված է՝ Issued by: Communicayions Server-ի կողմից:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված է, որ. <<9) .... տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման

դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է *էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում*, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով>>՝ անհրաժեշտություն է առաջանում պարզելու՝ արդյոք «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի հաստատման էլեկտրոնային ստարագրությունը բավարարում է Կարգի վերոնշյալ կետի համապատասխան պահանջին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6.Հանձնաժողովը որոշեց.**

6.1 Կասեցնել նիստը և սույն արձանագրության 5.1 և 5.3 կետերում նշված էկեկտրոնային ստորագրությունների հետ կապված առաջացած հարցերը պարզաբանելու նպատակով դիմել Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման նախագծերի համակարգող <<Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/>> ՓԲԸ-ին:

6.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել <<ԷԿԵՆԳ>> ՓԲԸ-ի կողմից համապատասխան պարզաբանման ստացման հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________ Էդգար Տոնականյան

Անդամներ՝ ____________ Սարգիս Արմենակյան

____________ Արթուր Թամրազյան

____________ Արման Հարությունյան

Քարտուղար՝ ____________ Մարիամ Հայրապետյան